

**ՀՀ ֆինանսների նախարարություն  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/7**

**8 հուլիսի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանի 06.06.2014 թ-ի դիմումով բերված գանգատը:

**Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանը հայտնում է, որ իր կողմից ներկայացված արտոնագիր թիվ 34/300514003202 և արտոնագիր թիվ 34/310514003298-ում տեղի է ունեցել մեխանիկական սխալ, որի հետևանքով գործունեության իրականացման վայրը նշվել է «Մարզկենտրոններ», սակայն պետք է նշվեր «Այլ վայրեր», իսկ ելակետային տվյալի մեծությունը 20 մ<sup>2</sup> փոխարեն պետք է նշվեր 40 մ<sup>2</sup>:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանը խնդրում է թույլատրել կատարելու վերը նշված մեխանիկական սխալների ուղղում:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանի կողմից արտոնագրային վճար վճարող համարվելու համար Հրազդանի հարկային տեսչություն ներկայացված դիմում-հայտարարություններում, որոնց հիման վրա տրամադրվել են թիվ 34/300514003202 և թիվ 34/310514003298 արտոնագրերը, թյուրիմացաբար գործունեության իրականացման վայրը «Այլ վայրեր»-ի փոխարեն նշվել է «Մարզկենտրոններ»:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ սույն գործում առկա է Կոտայքի մարզի Սուլակի գյուղապետարանի համայնքի ղեկավարի 04.06.2014 թ-ի թիվ 032 տեղեկանքը առ այն, որ Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանը գործունեություն է ծավալում հանրային սննդի ոլորտում Կոտայքի մարզի Սուլակ համայնքի վարչական տարածքում:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ վերոգրյալ արտոնագրերում Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանի կողմից թյուրիմացաբար սխալ է նշվել նաև ելակետային տվյալի մեծությունը, այն է՝ նշվել է 20 մ<sup>2</sup>, սակայն պետք է նշվեր 40 մ<sup>2</sup>:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ գործունեության իրականացման վայրը, ինչպես նաև ելակետային տվյալի մեծությունը Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանի կողմից սխալ են նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումները կրում են ձևական բնույթ, քանի որ Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանի վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, վերջինիս կողմից կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Անդրանիկ Սաֆարյանի 06.06.2014 թ-ի դիմումով բերված գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ